Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

03.10.2022թ. ք.Սևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր՝ Խաչիկ Հովհաննիսյանս, ուսումնասիրելով 17.06.2022թ. հարուցված թիվ 09216992 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 16.06.2022թ-ին տրված թիվ ԵԴ/10315/17/22 կատարողական թերթի համաձայն պետք է Բելլա Ստյոպիկի Հովհաննիսյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 2.041.598 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 66 և 67 հոդվածների համաձայն պարտապանից հօգուտ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պետք է բռնագանձել բռնագանձված գումարի 5 տոկոսի չափով գումար, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսեր:

Կատարողական վարույթի շրջանակներում պարտապան՝ Բելլա Ստյոպիկի Հովհաննիսյանի գրանցման վայրի զննությամբ, պարտապանի գույքի և դրամական միջոցների նկատմամբ հայտարարված հետախուզման արդյունքում պարտապանին պատկանող բռնագանձման ենթակա գույք կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել և ի հայտ են եկել պարտապանի սնանկության հատկանիշներ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1-րդ հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 17.06.2022թ. հարուցված թիվ 09216992 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ՝
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ՝

Digitally signed by HOVHANNISYAN KHACHIK 4003880676
Date: 2022.10.03 12:44:03 AMT

Խ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ